Հաստատված է

Հայաստանի Հանրապետության
շուկայի վերահսկողության
տեսչական մարմնի ղեկավարի
2021 թվականի փետրվարի 3-ի
N 63-Ա հրամանով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ (ՇՎՏՄ)

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Բ ո վ ա ն դ ա կ ո ւ թ յ ո ւ ն

1. Ներածություն _____ 3

2. ՇՎՏՄ-ի 2020թ. գործունեության տարեկան ծրագրով սահմանված թիրախներին հասնելու միջոցները և դրանց արդյունքները _____ 3

3. ՇՎՏՄ-ի կողմից կատարված իրազեկման միջոցառումները _____ 8

4. ՇՎՏՄ-ի վերահսկողության ոլորտում առկա ռիսկերը _____ 8

5. ՇՎՏՄ-ի կողմից իրականացված խորհրդատվական գործունեությունը և դրանց արդյունքները _____ 10

6. ՇՎՏՄ-ի կողմից իրականացված կանխարգելիչ միջոցառումները, դրանց նպատակները և արդյունքները _____ 12

7. ՇՎՏՄ-ի կողմից իրականացված ստուգումները և դրանց արդյունքները _____ 13

8. Տնտեսվարող սուբյեկտների կողմից կատարվող իրավական խախտումները և դրանց նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցները _____ 15

9. Օրենսդրական առաջարկները _____ 16

10. ՇՎՏՄ-ի պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության դեմ բողոքները _____ 16

11. ՇՎՏՄ-ի վերահսկման ոլորտի կանխատեսումը _____ 17

12. Որակի ստորաբաժանման կոմից ՇՎՏՄ-ի կատարողականի գնահատման վերաբերյալ տարեկան հաշվետվություն _____ 18

1. Ներածություն

ՇՎՏՄ-ի 2020 թվականի տարեկան գործունեության վերաբերյալ հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) մշակման համար հիմք են հանդիսացել «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N732-Լ որոշմամբ հաստատված ՇՎՏՄ-ի կանոնադրության դրույթները, ՇՎՏՄ-ի 2020 թվականի գործունեության և ստուգումների տարեկան ծրագրերը, որակի ապահովման ստորաբաժանման կողմից իրականացված կատարողականի գնահատումը և այլ իրավական ակտերը:

ՇՎՏՄ-ն 2020 թվականին իրականացրել է ոչ պարենային արտադրանքների տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների, չափագիտական կանոնների և նորմերի պահպանման նկատմամբ վերահսկողություն՝ ապահովելով վերահսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների կանխարգելումը, սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, այդ թվում՝ անվտանգ ոչ պարենային արտադրանքների առկայությունը շուկայում:

2. ՇՎՏՄ-ի 2020թ. գործունեության տարեկան ծրագրով սահմանված թիրախներին հասնելու միջոցները և դրանց արդյունքները

ՇՎՏՄ-ն 2020թ. գործունեության տարեկան ծրագրով սահմանված թիրախներին հասնելու համար իրականացրել է իրազեկման, խորհրդատվական աշխատանքներ, ինչպես նաև կիրառել վերահսկողական լծակները:

ՇՎՏՄ-ն 2020թ. գործունեության տարեկան ծրագիրը կազմելիս թիրախավորել էր հետևյալ ոլորտները՝

1. ավտոգազալիցքավորման ճնշակայաններ (ԱԳԼՃԿ),
2. ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիք,
3. հեղուկացված ածխաջրածնային գազեր,
4. չափումների միասնականության ապահովում,

5. խաղալիքներ,
6. երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանք,

ՇՎՏՄ-ն 2020թ. գործունեության տարեկան ծրագրով իր առջև սահմանել էր հետևյալ հիմնական թիրախները.

1. **<u>ԱԳԼՃԿ-ների ոլորտում</u>** թույլ տրված հիմնական խախտումն է ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 28-ի N 1101-Ն որոշմամբ հաստատված տեխնիկական կանոնակարգի 87-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջի չկատարումը, այն է՝ բնական գազի կոմպրեսացված վառելիքի լիցքավորման բաշխիչ աշտարակը պետք է սահմանափակի լիցքավորվող գազի ճնշումը՝ մինչև 19,6 ՄՊա:

ՇՎՏՄ-ն ԱԳԼՃԿ-ներում բնական գազի կոմպրեսացված վառելիքի ճնշումը մինչև 19,6 ՄՊա սահմանափակելու նպատակով դեռևս 2019 թվականի 4-րդ եռամսյակին ՀՀ կառավարություն էր ներկայացրել առաջարկություն փոփոխություն կատարել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում՝ կատարած խախտումների համար սահմանելով համաչափ տուգանքների չափեր (ներկայումս սահմանված է տուգանք՝ 50 հազից 100 հազար դրամ): Տուգանքների չափերի բարձրացումը կզսպի սահմանված ճնշումից ավելի բարձր ճնշմամբ գազի լիցքավորումը: 2020 թվականի ընթացքում նախատեսված էր ստուգումներ իրականացնել ԱԳԼՃԿ շահագործող թվով 47 տնտեսվարող սուբյեկտի մոտ՝ նվազեցնելով խախտումների տեսակարար կշիռը առնվազն 10%-ով:

ՇՎՏՄ-ի կողմից կատարված տուգանքների չափերի վերանայման առաջարկը դեռևս ընդունված չէ, ինչի արդյունքում ԱԳԼՃԿ-ների ոլորտում առկա խախտումների նվազման տենդենց չի նկատվում: 2019 թվականին ԱԳԼՃԿ-ների ոլորտում 47 տնտեսվարող սուբյեկտի մոտ իրականացված ստուգումներից 19-ում (40.4%) հայտնաբերվել են խախտումներ, իսկ 2020-ին 43-ից 25-ի (58.1%) մոտ:

2. **<u>Ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիքի ոլորտում</u>** առկա ռիսկերը հիմնականում պայմանավորված են վառելիքի անվտանգության ցուցանիշներով

և թերլցումներով: Այդ ռիսկերի նվազեցման նպատակով ՇՎՏՄ-ն նպատակադրվել էր 2020 թվականի ընթացքում խախտումների տեսակարար կշիռը նվազեցնել 9-11%-ով:

2020 թվականի ընթացքում ստուգումներ է իրականացնել ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիք իրացնող թվով 38 տնտեսվարող սուբյեկտի մոտ և վերցվել է թվով 51 ավտոմոբիլային բենզինի և դիզելային վառելիքի փորձանմուշ: Լաբորատոր փորձարկման արդյունքում փորձանմուշների 48.5%-ի մոտ հայտնաբերվել են ծծմբի զանգվածային մասի, ածխաջրածինների ծավալային մասի և օկտանային թվի անհամապատասխանություններ: 2019 թվականի ընթացքում ստուգումներ է իրականացնել թվով 24 տնտեսվարող սուբյեկտի մոտ և վերցվել է թվով 35 փորձանմուշ, որից 51.4%-ի մոտ են հայտնաբերվել անհամապատասխանություններ: Անվտանգության ցուցանիշները բարելավվել են գրեթե 3%-ով:

2020 թվականին 35 տնտեսվարող սուբյեկտի մոտ իրականացված չափագիտական կանոնների և նորմերի ստուգման արդյունքում հայտնաբերվել են թերլցման 15 դեպք (42.8%), իսկ 2019-ին 23 տնտեսվարող սուբյեկտի մոտ իրականացված ստուգումների արդյունքում՝ 19 դեպք (82.6%): Թերլցման դեպքերը նվազել են գրեթե 40%-ով:

3. **<u>Որպես վառելիք օգտագործելու համար նախատեսված հեղուկացված ածխաջրածնային գազերի ոլորտում</u>** առկա ռիսկերը հիմնականում պայմանավորված են վառելիքի անվտանգության ցուցանիշներով և թերլցումներով: Առկա ռիսկերը մեղմելու նպատակով 2020 թվականի ընթացքում ստուգումներ են իրականացնել հեղուկ գազ վաճառող թվով 32 տնտեսվարող սուբյեկտի մոտ, որից 20-ի մոտ հայտնաբերվել են չափագիտական կանոնների և նորմերի խախտումներ:
4. **<u>Չափագիտության ոլորտում՝</u>** նախատեսվել էր ստուգաչափված չափման միջոցների շահագործման աճ՝ 5-7%-ով:

ՇՎՏՄ-ի կողմից 2020 թվականի ընթացքում իրականացված ստուգումների արդյունքում բացահայտված խախտումների և թերությունների վերացման նպատակով ստուգաչափվել է թվով 470 չափման միջոց (2018-ին՝ 537, 2019-ին՝ 409): Չստուգաչափված չափման միջոցների աճը պայմանավորված է ՀՀ վարչապետի հանձնարարությամբ թվով 92 գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսվարող սուբյեկտների մոտ իրականացված չափագիտական կանոնների և նորմերի պահպանման ստուգումների արդյունքում հայտնաբերված շուրջ 163 չստուգաչափված չափման միջոցների շահագործմամբ:

2020 թվականի ընթացքում 265 տնտեսվարող սուբյեկտի մոտ իրականացվել են չափագիտական կանոնների և նորմերի ստուգում, որի արդյունքում 174 տնտեսվարող սուբյեկտի մոտ (65.7%) հայտնաբերվել են չափագիտական կանոնների և նորմերի խախտումներ: 2019 թվականին՝ 126 տնտեսվարող սուբյեկտի մոտ, որի արդյունքում 78-ի մոտ (61.9%) հայտնաբերվել են խախտումներ: Իսկ 2018 թվականին՝ 100 տնտեսվարող սուբյեկտի մոտ, որի արդյունքում 47-ի մոտ (47.0%) հայտնաբերվել են խախտումներ:

5. **<u>Համապատասխանության գնահատման ոլորտում՝</u>** նախատեսվել էր համապատասխանության գնահատման ընթացակարգ անցած ոչ պարենային արտադրանքի աճ՝ 6-8%-ով:

ՇՎՏՄ-ի կողմից 2020 թվականի ընթացքում իրականացված ստուգումների արդյունքում բացահայտված խախտումների և թերությունների վերացման նպատակով տնտեսվարող սուբյեկետները դիմել և համապատասխան մարմիններից ստացել են թվով 91 համապատասխանության գնահատման փաստաթուղթ՝ սերտիֆիկատներ և հայտարարագրեր (2018-ին՝ 121, 2019-ին՝ 191): Գտնում ենք, որ նախորդ տարվա ընթացքում իրականացված ստուգումների քանակի (277 ստուգում) նկատմամբ 2020 թվականի ընթացքում իրականացված ստուգումների քանակի (504 ստուգում) կտրուկ աճի (82%) պարագայում առանց համապատասխանության գնահատման փաստաթղթերի ոչ պարենային

արտադրանքների հայտնաբերման քանակի նվազումը վկայում է դրանց անվտանգության մասին:

2020 թվականի ընթացքում թվով 625 ստուգաթերթով իրականացվել է համապատասխանության գնահատման փաստաթղթի առկայության ստուգում, ինչի արդյունքում 151 ստուգաթերթով (24.2%) արձանագրվել է խախտում: 2019 թվականին՝ թվով 436 ստուգաթերթով, ինչի արդյունքում 159 ստուգաթերթով (36.5%) արձանագրվել է խախտում: 2018 թվականին՝ թվով 431 ստուգաթերթով, ինչի արդյունքում 187 ստուգաթերթով (43.4%) արձանագրվել է խախտում:

6. **<u>Մակնշման ոլորտում՝</u>** նախատեսվել էր առանց մակնշման կամ թերի մակնշմամբ ոչ պարենային արտադրանքի իրացման նվազում՝ 5-7%-ով:

ՇՎՏՄ-ն 2020 թվականի ընթացքում իրականացված ստուգումների արդյունքում թվով 141 ստուգաթերթով արձանագրվել է մակնշման պահանջի խախտման դեպք, ինչի արդյունքում տնտեսվորող սուբյեկտները ապահովել են այդ արտադրանքների համար սահմանված մակնշման պահանջները: 2018 թվականին արձանագրվել է 146 դեպք, իսկ 2019 թվականին՝ 109 դեպք (հավելված 1):

2020 թվականի ընթացքում թվով 625 ստուգաթերթով իրականացվել է մակնշման պահանջների ստուգում, ինչի արդյունքում 141 ստուգաթերթով (22.5%) արձանագրվել է խախտում: 2019 թվականին՝ թվով 436 ստուգաթերթով, ինչի արդյունքում 131 ստուգաթերթով (30.0%) արձանագրվել է խախտում: 2018 թվականին՝ թվով 431 ստուգաթերթով, ինչի արդյունքում 146 ստուգաթերթով (33.9%) արձանագրվել է խախտում:

Վերը նշվածից ելնելով կարելի է եզրահանգել, որ ՇՎՏՄ-ի կողմից ձեռնարկված միջոցառումների շրջանակներում արձանագրված արդյունքները համեմատելով նախորդ տարվա արդյունքների հետ հասել է իր կողմից սահմանած թիրախներին:

3. ՇՎՏՄ-ի կողմից կատարված իրազեկման միջոցառումները

2020 թվականին կորոնավիրուսի համաճարակով և ռազմական դրությամբ պայմանավորված՝ ՇՎՏՄ-ի կողմից իրականացված իրազեկման աշխատանքների ծավալները որոշակիորեն զիջել են նախորդ տարիների արդյուքներին:

Երևանում և հանրապետության մի քանի մարզերում ՇՎՏՄ-ի աշխատակիցների կողմից բաժանվել են իրազեկող թերթիկներ, ներկայացվել են ՀՀ և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի գործառնության սահմանները և դրանց կիրառման անհրաժեշտությունը: ՇՎՏՄ-ի կողմից իրազեկվել են՝ 2018 թ-ին՝ 550, 2019 թ-ին 720, իսկ 2020 թ-ին՝ 530 տնտեսվարող սուբյեկտ:

ՇՎՏՄ-ն նոր կորոնավիրուսի համավարակով պայմանավորված, 2020 թվականի ընթացքում Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի հետ համատեղ իրականացրել է նաև մշտադիտարկումներ թվով 4819 տնտեսվարող սուբյեկտների մոտ՝ նրանց կողմից պարետի որոշումներով սահմանված պահանջների և պայմանների պահպանման նկատմամբ, ինչի արդյունքում 208 տնտեսվարող սուբյեկտի գործունեություն ժամանակավորապես կասեցվել է: Նշված մշտադիտարկման գործընթացը լայնորեն լուսաբանվել է ինչպես հեռուստատեսությամբ, այնպես էլ էլեկտրոնային լրատվության միջոցներով: Կազմակերպվել է նաև ուղիղ եթերում լուսաբանման գործողություններ:

4. ՇՎՏՄ-ի վերահսկողության ոլորտում առկա ռիսկերը

Առավել ռիսկային ոլորտները և տնտեսվարող սուբյեկտները բացահայտելու, նպատակով ՇՎՏՄ-ն տեղեկատվություն է հավաքագրել պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ կազմակերպություններից, քաղաքացիներից և այլ աղբյուրներից: Մասնավորապես՝

1. ՀՀ կառավարությանն ենթակա պետական եկամուտների կոմիտեից՝ ՀՀ տարածք ներմուծվող և իրացնող ոչ պարենային արտադրանքների վերաբերյալ,
2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի, շրջակա միջավայրի, տարածքային կառավարման և զարգացման նախարարություններից,
3. Հայաստանի Հանրապետության մարզպետարաններից,
4. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնից,
5. <<Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին>> ՓԲԸ-ից՝ տնտեսվարող սուբյեկտների կողմից ստուգաչափված չափման միջոցների վերաբերյալ,
6. Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքներից,
7. ՀՀ-ում իրականացված իրազեկման աշխատանքների արդյունքներից,
8. Ստացված դիմում-բողոքների և հեռախոսազանգի միջոցով,
9. ԶԼՄ-ներից և համացանցից՝ իրականացված ուսումնասիրությունների միջոցով:

ՇՎՏՄ-ի կողմից վերահսկման ենթակա ոլորտում գործող առավել ռիսկային տնտեսավարող սուբյեկտներին բացահայտելու նպատակով ՀՀ կառավարությանն ենթակա պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված ՀՀ տարածք ներմուծված (այդ թվում նաև ԵԱՏՄ-ից) ոչ պարենային արտադրանքի վերաբերյալ տեղեկատվությունը համադրվել է համապատասխանության սերտիֆիկատների և համապատասխանության հայտարարագրերի ռեեստրում զետեղված տվյալների հետ, ինչի արդյունքում պարզվել է, որ 2019 թվականի ընթացքում պարբերաբար և խոշոր ծավալի ոչ պարենային արտադրանք ներմուծող տնտեսվարող սուբյեկտների ընդամենը 36.1%-ն է (2018թ.-ին՝ 32.8%) իր կողմից ներմուծած արտադրանքը ենթարկել համապատասխանության գնահատման, իսկ 2020 թվականին՝ շուրջ 37,8%-ը: Ելնելով վերը շարադրվածից ակնհայտ է, որ գրանցվել է համապատասխանության գնահատման ընթացակարգ անցած ՀՀ տարածք

ներմուծված ոչ պարենային արտադրանքի աճ՝ 1.7%-ով, ինչը վկայում է ՀՀ տարածք ներմուծված ոչ պարենային արտադրանքի շուկայում անվտանգության ցուցանիշների աճի մասին:

ՇՎՏՄ-ն ռիսկային ոլորտները բացահայտելու նպատակով վերլուծել է նաև 2020 թվականի ընթացքում իրականացված ստուգումների արդյունքները՝ ըստ կիրառված ստուգաթերթերի, որի պատկերը հետևյալն է՝

N	Ոլորտի անվանումը	Խախտումների տեսակարար կշիռը (%)
1.	Թեթև արդյունաբերության	91.7
2.	Բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանք	85.7
3.	Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանք	75.0
4.	Ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիք	68.4
5.	Չափումների միասնականության ապահովում	65.5
6.	Սինթետիկ հիմքով լաքեր և ներկեր	60.0
7.	Գազանման վառելիքով աշխատող սարքավորումներ	60.0
8.	Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն	59.6
9.	Ավտոգազալիցքավորման ճնշակայաններ (ԱԳԼՃԿ)	58.1
10.	Ցեմենտ	54.5
11.	Ցածրավոլտ սարքավորումներ	51.4
12.	Խաղալիքներ	50.0
13.	Քսանյութեր, յուղերին և հատուկ հեղուկներ	40.0
14.	Կենցաղային եվ սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներ	30.0
15.	Օծանելիքակոսմետիկական արտադրանք	28.8
16.	Խեցեգործական ամանեղեն	23.1
17.	Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և այդ հիմքով պլաստմասսայե արտադրանքներ	18.5
18.	Լվացող և մաքրող միջոցներ	15.6

5. ՇՎՏՄ-ի կողմից իրականացված խորհրդատվական գործունեությունը և դրանց արդյունքները

«Թեժ գիծ» հեռախոսահամարով ստացվել է 284 հեռախոսազանգ (110-ով ավել՝ նախորդ 2019թ-ի և 35-ով՝ 2018թ-ի համեմատ):

Ստացված հեռախոսազանգերից

- 112-ը վերաբերել են ՇՎՏՄ-ի լիազորություններին (54-ով ավելի՝ նախորդ 2019թ-ի և 57-ով՝ 2018թ-ի համեմատ):

  Մասնավորապես՝

  ԱԳԼՃԿ-ների ոլորտի վերաբերյալ՝ 19, հեղուկ գազի՝ 10, նավթամթերքի՝ 8, ալկոգելի և ախտահանիչների՝ 9, էլեկտրական սարքավորումների՝ 9, թեթև արդյունաբերության՝ 15, օծանելիքակոսմետիկական արտադրանքի՝ 11, տնտեսական ապրանքների՝ 9, լվացող մաքրող միջոցների՝ 3, հակասառցապատիչ հեղուկների՝ 2, ծխախոտի՝ 2, շինանյութի՝ 2, թանկարժեք մետաղների՝ 1, կահույքի՝ 1, կանացի միջադիրների՝ 1, այլ հարցերի շուրջ խորհրդատվություն՝ 10: Նշված հեռախոսազանգերը կրել են խորհրդատվական բնույթ, տրվել է համապատասխան տեղեկատվություն:
- 172 զանգ ՇՎՏՄ-ին վերապահված լիազորությունների շրջանակներից դուրս է եղել (56-ով ավելի՝ նախորդ 2019թ-ի և 22-ով պակաս՝ 2018թ-ի համեմատ): Մասնավորապես՝

  72-ը վերաբերել են գնված ապրանքների հետ վերադարձմանը կամ փոխանակմանը, 31-ը՝ սպառողների իրավունքների պաշտպանությանը (սպասարկման հետ կապված խնդիրներ՝ նաև օնլայն հարթակներում), 21-ը՝ ապրանքների որակի հետ կապված խնդիրներին, 17-ը՝ ապրանքների թանկացմանը, 5-ը՝ ՇՎՏՄ-ի լիազորությունների տիրույթից դուրս գտնվող ապրանքների սերտիֆիկացմանը, 9-ը՝ տնտեսվարողների՝ տնտեսական գործունեություն ծավալելու հետ կապված խնդիրներին, 3-ը՝ ժամկետանց ապրանքների վաճառքին, 3-ը՝ կոմունալ ծառայություններին, 2-ը՝ ՀԴՄ կտրոններին, 2-ը՝ քաղաքացիների սոցիալական խնդիրներին, 2-ը՝ գնապիտակներին, 1-ական՝ ապրանքի շտրիխ կոդին, կարանտինային պայմանների խախտմանը, տրանսպորտին, կորոնավիրուսի դեմ պայքարի միջոցների, և ադրբեջանական արտադրանքի հայտնաբերմանը:

ՇՎՏՄ-ն ստացել է 102 գրավոր դիմում-բողոք (40-ով ավելի՝ նախորդ 2019թ-ի և 78-ով՝ 2018թ-ի համեմատ), որից 44-ի հիման վրա իրականացվել են

ստուգումներ, 58-ը եղել են ՇՎՏՄ-ի լիազորությունների շրջանակներից դուրս կամ բացակայել է անհրաժեշտ տեղեկատվությունը: Բոլորին պատշաճ կերպով և ժամկետներում տրվել են պատասխաններ:

Գրավոր դիմում-բողոքների հիման վրա ստուգումներ են իրականացվել հետևյալ ոլորտներում՝ հեղուկացված ածխաջրածնային գազի լցակայաններ՝ 15, բենզինի և դիզ. վառելիքի լցակայաններ՝ 13, ԱԳԼՃԿ-ներ՝ 9, էլ. սարքավորումներ՝ 3, հագուստ՝ 2, բուրաջուր՝ 1, հացի գործարանի կշեռքի ստուգաչափում՝ 1:

ՇՎՏՄ-ի լիազորություններից դուրս գտնվող 58 դիմում-բողոքներից 14-ը վերաբերվել են կարանտինային պայմաններում առաջացած սոցիալական խնդիրներին, 12-ը՝ ապրանքների հետ վերադարձնելու խնդրին, 4-ը՝ ՀԴՄ-ներին, 4-ը՝ տնտեսվարողների ոչ պատշաճ սպասարկմանը, 4-ը՝ ապրանքների թանկացմանը, 3-ը՝ ապրանքների որակի խնդրին, 2-ը՝ փողոցային առևտրին, 13-ը՝ այլ խնդիրների: Քաղաքացիների կողմից եղել են 2 գրավոր առաջարկներ:

Առավել հաճախ բարձրացվող հարցերը վերաբերվել են ոչ պարենային արտադրանքի համապատասխանության գնահատման գործընթացին, մակնշմանը, ետ վերադարձին, ինչպես նաև ավտոմոբիլային վառելիքի թերլիցքավորմանը, որոնց պատասխանների իրավական հիմքերը տրված են հավելված 2-ում նշված իրավական ակտերում:

6. ՇՎՏՄ-ի կողմից իրականացված կանխարգելիչ միջոցառումները, դրանց նպատակները և արդյունքները

Զանգվածային լրատվամիջոցներում լուսաբանվել է ՇՎՏՄ-ի գործունեությունը: ՇՎՏՄ-ի կողմից տարածվել է 9 մամուլի հաղորդագրություն, իսկ ԶԼՄ-ների գրավոր հարցումներին տրված պատասխանների և ՇՎՏՄ-ի ներկայացուցիչների՝ տեքստային ձևաչափով հարցազրույցների ու մեկնաբանությունների ընդհանուր քանակը կազմել է ութ: ՇՎՏՄ-ի գործունեությունը լուսաբանվել է նաև 7 ռեպորտաժներում, որոնցում հնչել են ՇՎՏՄ-ի ներկայացուցիչների մեկնաբանությունները: ՇՎՏՄ-ի ֆեյսբուքյան

պաշտոնական էջի միջոցով իրականացվել է նաև խորհրդատվական-տեղեկատվական աշխատանք՝ ուղղված սպառողների և տնտեսվարողների իրավագիտակցության բարձրացմանը: Սպառողների հետ առավել ակտիվ է եղել կապը սոցցանցի միջոցով՝ տրամադրելով խորհրդատվություն:

Ֆեյսբուք սոցիալական ցանցի միջոցով պարբերաբար տեղեկատվություն է հրապարակվել ՇՎՏՄ-ի իրականացրած ստուգումների արդյունքների, արտակարգ իրավիճակում Պարետատան սահմանած հակահամաճարակային նորմերի պահպանման ուղղությամբ ՇՎՏՄ-ի կողմից տարվող աշխատանքների, ինչպես նաև ռազմական դրության ժամանակ պատերազմական գործողությունների ընթացքի վերաբերյալ:

Գործարկվել է ՇՎՏՄ-ի նոր պաշտոնական կայքը, որի արդիականացման ուղղությամբ աշխատանքները կրում են շարունակական բնույթ: Պարբերաբար աշխատանքներ են տարվում նաև իրազեկման եւ խորհրդատվական աշխատանքներում սոցիալական մեդիա միջոցների ակտիվորեն կիրառման ուղղությամբ:

7. ՇՎՏՄ-ի կողմից իրականացված ստուգումները և դրանց արդյունքները

ՇՎՏՄ-ի կողմից 2018-2020թթ. ստուգումների տարեկան ծրագրերով նախատեսված տնտեսվարող սուբյեկտի մոտ ստուգումների քանակային պատկերը հետևյալն է՝

N	Եռամսյակներ	2018թ.	2019թ.	2020թ.
1.	1-ին եռամսյակ	53	53	83
2.	2-րդ եռամսյակ	78	78	103
3.	3-րդ եռամսյակ	61	67	92
4.	4-րդ եռամսյակ	48	52	72
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը		**240**	**250 (աճ 4%)**	**350 (աճ 40%)**

ՇՎՏՄ-ի կողմից 2018-2020թթ. տնտեսվարող սուբյեկտի մոտ փաստացի իրականացված ստուգումների քանակային պատկերը հետևյալն է՝

N	Ստուգման հիմքը	2018թ.	2019թ.	2020թ.
1.	ծրագրով նախատեսված	224 (92.0%)	238 (86.0%)	286 (58.8%)
2.	ՀՀ վարչապետի հանձնարարականով (գյուղատնտեսական մթերք մթերողների ոլորտում՝ չափագիտական կանոնների և նորմերի պահպանման նկատմամբ)	0	0	92 (18.9%)
3.	ՀՀ վարչապետի հանձնարարականով (օծանելիքակոսմետի-կական արտադրանք հանդիսացող ալկոգելների նկատմամբ սահմանված պահանջների պահպանման նկատմամբ)	0	0	52 (10.7%)
4.	դիմում-բողոքի հիման վրա	5 (2.0%)	39 (14.0%)	48 (10.0%)
5.	Այլ պետական մարմինների գրությունների հիման վրա	15 (6.0%)	0	8 (1.6%)
	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	**244**	**277**	**486**

ՇՎՏՄ-ի կողմից 2020 թվականի ընթացքում իրականացված ստուգումների քանակը նախորդ տարվա համեմատ աճել է 75.0%-ով, իսկ 2018 թվականի համեմատ՝ գրեթե կրկնակի:

Տնտեսվարող սուբյեկտի մոտ ծրագրով նախատեսված ստուգումների քանակը փաստացի իրականացված քանակից քիչ է կազմում՝ պայմանավորված տնտեսվարող սուբյեկտների գործունեության դադարացմամբ, ժամանակավոր դադարեցմամբ, ինչպես նաև ռազմական դրության ժամանակ իրականացվող ստուգումների ծավալի նվազեցմամբ:

Առկա է նաև դիմում-բողոքների 23% աճ, ինչը արդյունք է սպառողների կողմից իրազեկվածության մակարդակի բարձրացման և ՇՎՏՄ-ի կողմից բողոքներին արագ արձագանքման:

ՇՎՏՄ-ի կողմից 2018 թվականի ընթացքում իրականացված մեկ ստուգման համար պահանջվել է 3.7 մարդ/օր, 2019 թվականին՝ 2.1 մարդ/օր, իսկ 2020 թվականին՝ 2.04 մարդ/օր: Ծախսված ֆինանսական միջոցը կազմել է՝ 2018 թվականին՝ 10438 դրամ, 2019 թվականին՝ 18714 դրամ, իսկ 2020 թվականին՝ 16784 դրամ:

8. Տնտեսավարող սուբյեկտների կողմից կատարվող իրավական խախտումները և դրանց նկատմամբ կիրառված պատասխանատվության միջոցները

ՇՎՏՄ-ի կողմից 2018 թվականին ստուգումներն իրականացվել են թվով 531 ստուգաթերթով, որից արձանագրվել է խախտում 329-ով (62.0%), 2019 թվականին՝ 562, որից արձանագրվել է խախտում 333-ով (58.8%), իսկ 2020 թվականին՝ 890, որից արձանագրվել է խախտում 480-ով (53.9%): Այս երեք տարիների ընթացքում նկատվում է խախտում արձանագրված ստուգաթերթերի տեսակարար կշռի նվազում կիրառված ստուգաթերթերի ընդհանուր քանակի նկատմամբ:

ՇՎՏՄ-ի կողմից 2018-2020թթ. ընթացքում կատարված ստուգումների արդյունքում բացահայտված խախտումների պատկերը հետևյալն է՝

N	Արձանագրված խախտումների բնույթը	Տարեթիվ		
		2018թ.	2019թ.	2020թ.
1.	համապատասխանության գնահատման փաստաթղթերի բացակայություն	42.8%	39.8%	29.2%
2.	թերի մակնշում կամ բացակայություն	33.4%	32.8%	27.3%
3.	չափագիտական կանոնների և նորմերի խախտում	10.8%	19.5%	33.5%
4.	Այլ բնույթի	13.0%	7.9%	10.0%

Սույն վերլուծության ամբողջական պատկերը տրված է հավելված 1-ով:

Ստուգման արդյունքներով պայմանավորված 2018-2020թթ. ընթացքում նշանակված և փաստացի գանձված տուգանքների պատկերը հետևյալն է՝

2018թ.		2019թ.		2020թ.	
Նշանակված (հազ. դրամ)	Գանձված (հազ. դրամ)	նշանակված (հազ. դրամ)	գանձված (հազ. դրամ)	նշանակված (հազ. դրամ)	գանձված (հազ. դրամ)
32,820	26,325 (80,2%)	30,690	24.970 (81,4%)	47,385	25.830 (54,5%)

Գանձումների գործընթացն օրենքով սահմանված կարգով շարունակվում է:

Ստուգումների ընթացքում, ՇՎՏՄ-ի կողմից բացահայտված խախտումների և թերությունների վերացման նպատակով 2018 թվականին արձակվել է թվով 22 կարգադրագիր, 2019 թվականին՝ 30, իսկ 2020 թվականին՝ 28:

ՇՎՏՄ-ի կողմից իրականացված ստուգումների արդյունքներով պայմանավորված 2018 թվականի ընթացքում հարուցվել է թվով 225 վարչական վարույթ, 2019 թվականին՝ 202, իսկ 2020 թվականին՝ 352:

9. Օրենսդրական առաջարկները

ՇՎՏՄ-ի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու և օրենսդրական բացերը լրացնելու նպատակով առաջարկվել է մշակել հետևյալ նորմատիվ իրավական ակտերը.

- «Շուկայի վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ (շրջանառվում է),
- «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ (շրջանառվում է),
- «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ (շրջանառվում է),
- «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ (ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով):

ՇՎՏՄ-ի գործունեությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի ցանկը տրված է հավելված 2-ով:

10. ՇՎՏՄ-ի պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության դեմ բողոքները

2018 թվականի ընթացքում ՇՎՏՄ-ի կողմից կիրառված վարչական ակտի դեմ բերվել է թվով 4 հայցադիմում, որոնցից 3-ը գտնվում են դատաքննության փուլում իսկ 1-ը ավարտվել է ի վնաս ՇՎՏՄ-ի:

2019 թվականի ընթացքում ՇՎՏՄ-ի կողմից կիրառված վարչական ակտի դեմ բերվել է թվով 9 հայցադիմում, որոնք գտնվում են դատաքննության փուլում:
2020 թվականի ընթացքում ՇՎՏՄ-ի կողմից կիրառված վարչական ակտի դեմ բերվել է թվով 12 հայցադիմում, որոնք գտնվում են դատաքննության փուլում:

11. ՇՎՏՄ-ի վերահսկման ոլորտի իրավիճակի կանխատեսումը

ՇՎՏՄ-ն շարունակական և հետևողական աշխատանքի արդյուքնում կանխատեսում է 2021 թվականի ընթացքում իր կողմից վերահսկման ոլորտներում ապահովել դրական դինամիկա ստորև ներկայացված ցուցանիշների մասով՝

- **համապատասխանության գնահատման ոլորտում** իրազեկման մակարդակի բարձրացման, շուկայի ուսումնասիրության և վերահսկողական գործառույթի գործիքակազմի կիրառմամբ ապահովել համապատասխանության գնահատման ընթացակարգ անցած ոչ պարենային արտադրանք իրացնողների առնվազն 8-10% աճ,
- **չափագիտության ոլորտում** չափագիտական պետական լիազոր մարմնի հետ համագործակցության մակարդակի բարձրացման, և վերահսկողական գործառույթի իրականացմամբ ապահովել ստուգաչափված չափման միջոցների շահագործման առնվազն 12-15% աճ,
- **մակնշման ոլորտում** սպառողների իրազեկման մակարդակի բարձրացման, շուկայի ուսումնասիրության և վերահսկողական գործառույթի գործիքակազմի կիրառմամբ ապահովել առանց մակնշման կամ թերի մակնշմամբ ոչ պարենային արտադրանքի իրացման նվազում առնվազն 6-8%-ով:
- **Ոչ պարենային արտադրանքների ոլորտում՝** անվտանգության ցուցանիշների պահպանման աճ 10-ից-13%-ով,

12. Որակի ստորաբաժանման կոմից ՇՎՏՄ-ի կատարողականի գնահատման վերաբերյալ տարեկան հաշվետվություն

Սույն կատարողականի գնահատումն իրականացվել է ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի «Տեսչական մարմինների գործունեության կատարողականի գնահատման սկզբունքները, չափորոշիչները և կարգը հաստատելու մասին» N 693-Ն որոշմանը համապատասխան, բազմակողմանիության, ամբողջականության և անկողմնակալության սկզբունքներով, կատարողականի գնահատման չափորոշիչների վերլուծության և գնահատման միջոցով՝ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կատարողականի գնահատման մեթոդաբանության հիման վրա:

Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կատարողականի գնահատման չափորոշիչներն են՝

1) նպատակի չափորոշիչներ,
2) գործընթացի չափորոշիչներ,
3) արդյունքի չափորոշիչներ:

Արդյունքները համեմատվում են 2019 թ. արդյունքների հետ:

1. ՆՊԱՏԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

1.1) Տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակին հասնելու մակարդակը գնահատելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր ոլորտի համար վերլուծել հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների ընդհանուր կշիռը:

Արդյունքները ներկայացված են Հավելված 3-ում:

1.2) Ոլորտի առավել ռիսկային բնագավառներում փոփոխությունների առկայությունը գնահատելու համար վերլուծվում է հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի կողմից ոլորտի առավել ռիսկային

բնագավառներում իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների ընդհանուր կշիռը:

Արդյունքները ներկայացված են Հավելված 4-ում:

1.3) Ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները:

2020 թ. Տեսչական մարմնի կողմից ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար ֆինանսական միջոցներ չեն ծախսվել, իսկ հատկացված մարդկային ռեսուրսները կազմել են 2 աշխատակից:

2019 թ. Տեսչական մարմնի կողմից ռիսկերի պլանավորման, վերլուծության և գնահատման համար ֆինանսական միջոցներ չեն ծախսվել, իսկ հատկացված մարդկային ռեսուրսները կազմել են 3 աշխատակից:

1.4) Խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման միջոցների համար հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները:

2020 թ. Տեսչական մարմնի կողմից խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման նպատակով ծախսվել է 1 705 250 դրամ, իսկ հատկացված մարդկային ռեսուրսները կազմել են 10 աշխատակից::

2019 թ. Տեսչական մարմնի կողմից խորհրդատվության, մեթոդական աջակցության և կանխարգելման նպատակով ծախսվել է 1 123 600 դրամ, իսկ հատկացված մարդկային ռեսուրսները կազմել են 16 աշխատակից:

1.5) Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ համապատասխան ոլորտների քաղաքականություն մշակող պետական մարմիններին ներկայացված առաջարկների քանակը[1]:

2020 թ. Տեսչական մարմնի կողմից կազմվել և ներկայացվել են օրենսդրական փոփոխությունների 5 առաջարկ, որոնք գտնվում են շրջանառության մեջ:

[1] Այս կետի համար հաշվետու ժամանակահատված է համարվում չորս եռամսյակը:

2019 թ. Տեսչական մարմնի կողմից կազմվել և ներկայացվել են օրենսդրական փոփոխությունների 5 առաջարկ:

2. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Գործընթացի չափորոշիչները վերաբերում են Տեսչական մարմնի գործառույթների իրականացման ընթացքին:

2.1) Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը գնահատելու համար անհրաժեշտ է վերլուծել և համեմատել հաշվետու ժամանակահատվածում տարեկան ծրագրով չնախատեսված, սակայն Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների ընթացքում ստուգման գործընթացի միջին տևողությունը:

2020 թ. ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը կազմել է 1.6 օր:

2019 թ. ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը կազմել է 2.5 օր

2.2) Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտներում և ստուգման օբյեկտներում ստուգումների քանակը՝ ստուգումների ընդհանուր քանակի համեմատությամբ:

2020 թ. բարձր ռիսկային և ընդհանուր քանակի հարաբերակցությունը կազմել է 0.694: Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտների և ստուգման օբյեկտների քանակը կազմել է 198, իսկ իրականացված ստուգումների ընդհանուր քանակը կազմել է 285:

2019 թ. բարձր ռիսկային և ընդհանուր քանակի հարաբերակցությունը կազմել է 0.715: Բարձր ռիսկային տնտեսավարող սուբյեկտների և ստուգման օբյեկտների քանակը կազմել է 199, իսկ իրականացված ստուգումների ընդհանուր քանակը կազմել է 278:

2.3) Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողությունը:

2020 թ. ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողությունը կազմել է 2.7 օր:

2019 թ. ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված ստուգումների միջին տևողությունը կազմել է 2,9 օր:

2.4) Ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակի (որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ) հարաբերակցությունը ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների ընդհանուր քանակին:

2020 թ. ըստ անհրաժեշտության ստուգումներ, որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ, չեն իրականացվել:

2019 թ. ըստ անհրաժեշտության ստուգումներ, որոնց շնորհիվ կանխվել է հանրությանը, շրջակա միջավայրին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային շահերին, պետությանը սպառնացող էական վնաս կամ ռիսկ, չեն իրականացվել:

2.5) Ստուգման ենթարկված օբյեկտների բավարարվածության աստիճանը տեսչական մարմնի աշխատանքների անաչառությունից, ընթացակարգերի թափանցիկությունից, տեղեկատվության որակից և տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժությունից

2020 թ. դիմում-բողոքներ չեն ստացվել:

2019 թ. դիմում-բողոքներ չեն ստացվել:

3. ԱՐԴՅՈՒՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Արդյունքի չափորոշիչները վերաբերում են Տեսչական մարմնի կոնկրետ լիազորության իրականացման անմիջական արդյունքին:

3.1) Ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված և ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների քանակական հարաբերակցությունը

2020 թ. չափորոշչի քանակական հարաբերակցությունը կազմել է 0,694: Տեսչական մարմնի կողմից իրականացվել է 198 ըստ անհրաժեշտության ստուգում (տարեկան ծրագրով իրականացվել է 285 ստուգում):

2019 թ. չափորոշչի քանակական հարաբերակցությունը կազմել է 0,172: Տեսչական մարմնի կողմից իրականացվել է 41 ըստ անհրաժեշտության ստուգում (տարեկան ծրագրով իրականացվել է 237 ստուգում):

3.2) Տեսչական մարմնի վերահսկման երեքից հինգ բարձր ռիսկային բնագավառներում իրավիճակի փոփոխությունը[2] հաշվարկվում է նշված բնագավառներում առկա իրավիճակի գնահատականը համեմատելով նախորդ տարվա իրավիճակի գնահատականի հետ:

2020 թ.

Ոլորտ	Տարեկան ծրագրով նախատեսված ստուգման ենթարկված տնտեսվարողների ռիսկայնությունը մինչև ստուգում			Տարեկան ծրագրով նախատեսված ստուգման ենթարկված տնտեսվարողների ռիսկայնությունը ստուգման ավարտից հետո		
Խաղալիքների անվտանգություն	Բարձր 47	Միջին 2	Ցածր 0	Բարձր 49	Միջին 0	Ցածր 0
Ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջներ	Բարձր 26	Միջին 1	Ցածր 0	Բարձր 27	Միջին 0	Ցածր 0
Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանք	Բարձր 23	Միջին 0	Ցածր 0	Բարձր 23	Միջին 0	Ցածր 0

2019 թ.

Ոլորտ	Տարեկան ծրագրով նախատեսված ստուգման ենթարկված տնտեսվարողների ռիսկայնությունը մինչև ստուգում			Տարեկան ծրագրով նախատեսված ստուգման ենթարկված տնտեսվարողների ռիսկայնությունը ստուգման ավարտից հետո		
Խաղալիքների անվտանգություն	Բարձր 43	Միջին 0	Ցածր 0	Բարձր 43	Միջին 0	Ցածր 0
Ավտոգազալիցքավորման	Բարձր	Միջին	Ցածր	Բարձր	Միջին	Ցածր

[2] Այս կետի համար հաշվետու ժամանակահատված է համարվում չորրորդ եռամսյակը:

ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջներ	29	0	0	29	0	0
Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանք	Բարձր 21	Միջին 0	Ցածր 0	Բարձր 21	Միջին 0	Ցածր 0

3.3) Ըստ առանձին ստուգման հատկացված ֆինանսական միջոցները և մարդկային ռեսուրսները:

2020 թ. ըստ առանձին ստուգման հատկացված ֆինանսական միջոցները կազմել են 16 784 դրամ, իսկ մարդկային ռեսուրսները կազմել են 2.04 աշխատակից:

2019 թ. ըստ առանձին ստուգման հատկացված ֆինանսական միջոցները կազմել են 18 714 դրամ, իսկ մարդկային ռեսուրսները կազմել են 2.07 աշխատակից:

3.4) Տեսչական մարմնի, Տեսչական մարմնի աշխատակիցների դեմ բերված դիմում-բողոքների քանակը և դրանց արդյունքները:

2020 թ. տնտեսվարող սուբյեկտների կողմից բողոքարկվել են դատարանում Տեսչական մարմնի 12 որոշում (դատարանի որոշում չի կայացվել):

2019 թ. տնտեսվարող սուբյեկտների կողմից բողոքարկվել են դատարանում Տեսչական մարմնի 9 որոշում (դատարանի որոշում չի կայացվել):

2018 թվական

Հավելված 1

N	Ոլորտի անվանումը	Կիրառված ստուգաթերթերի քանակը			Խախտումների տեսակարար կշիռը (%)	Խախտումների բնույթը			Խախ-տումների ընդհանուր քանակը
		ըստ խախտում-ների առկայության	Ըստ խախտում-ների բացակա-յության	Ընդա-մենը (3+4)		համապա-տասխանության գնահատման փաստաթղթերի բացակայություն	թերի մակնշում կամ բացակա-յություն	այլ	
1	2	3	4	5	6	7	8	9	10
1.	Ավտոգազալիցքավորման ճնշակայաններ (ԱԳԼՃԿ)	25	0	25	100	0	0	25	25
2.	Ռադիոսարքավորումներ և հեռահաղորդակցության վերջնակետային սարքավորումներ	3	6	9	33	3	3	0	6
3.	Շինարարական ապակիներ	0	2	2	0	0	0	0	0
4.	Ցեմենտ	2	0	2	100	2	0	0	2
5.	Սինթետիկ հիմքով լաքեր և ներկեր	11	3	14	79	11	4	0	15
6.	Խեցեգործական ամանեղեն	7	12	19	37	7	5	0	12
7.	Խաղալիքներ	42	4	46	91	41	24	0	65
8.	Օծանելիքակոսմետիկական արտադրանք	24	26	50	48	19	14	0	33
9.	Լվացող և մաքրող միջոցներ	4	11	15	27	2	2	0	4
10.	Ցածրավոլտ սարքավորումներ	52	11	63	83	44	37	0	81
11.	Գազանման վառելիքով աշխատող սարքավորումներ	10	4	14	71	7	7	0	14
12.	Քսանյութեր, յուղերին և հատուկ հեղուկներ	6	1	7	86	4	5	0	9
13.	Կենցաղային եվ սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներ	7	18	25	28	7	5	0	12
14.	Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանք	17	12	29	59	10	12	0	22
15.	Ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիք	31	7	38	82	0	0	31	31
16.	Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն	8	4	12	67	7	5	0	12
17.	Թեթեվ արդյունաբերության	12	4	16	75	4	12	0	16
18.	Օդաճնշական դողեր	2	1	3	67	2	0	0	2
19.	Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և այդ հիմքով պլաստմասսայե արտադրանքներ	7	4	11	64	6	5	0	11
20.	Չափումների միասնականության ապահովում	47	53	100	47	0	0	47	47
21.	Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառք	1	3	4	25	0	0	1	1
22.	փաթեթվածք	7	7	14	50	7	5	0	12
23.	Ծխախոտային արտադրանք	0	3	3	0	0	0	0	0
24.	Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման գործունեություն	0	2	2	0	0	0	0	0
25.	Բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանք	1	2	3	33	1	0	0	1
26.	Սեղմված բնական գազով աշխատող վառելիքային համակարգեր	0	2	2	0	0	0	0	0
27.	Կահույքագործական արտադրանք	1	0	1	100	1	0	0	1
28.	Վերգետնյա տրանսպորտային միջոցներում օգտագործվող ապակիներ	2	0	2	100	2	1	0	3
	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	329	202	531	62.0	187	146	104	437

2019 թվական

N	Ոլորտի անվանումը	Կիրառված ստուգաթերթերի քանակը			Խախտումների տեսակարար կշիռը (%)	Խախտումների բնույթը			Խախ-տումների ընդհանուր քանակը
		ըստ խախտումների առկայության	Ըստ խախտում-ների բացակա-ության	Ընդա-մենը (3+4)		համապա-տասխանության գնահատման փաստաթղթերի բացակայություն	թերի մակնշում կամ բացակա-ություն	այլ	
1	2	3	4	5	6	7	8	9	10
1.	Ավտոգազալիցքավորման ճնշակայաններ (ԱԳԼՃԿ)	19	28	47	40.4	0	0	19	19
2.	Ռադիոսարքավորումներ և հեռահաղորդակցության վերջնակետային սարքավորումներ	4	0	4	###	4	1	0	5
3.	Ցեմենտ	0	1	1	0.0	0	0	0	0
4.	Սինթետիկ հիմքով լաքեր և ներկեր	10	1	11	90.9	10	3	0	13
5.	Խեցեգործական ամանեղեն	5	5	10	50.0	5	5	0	10
6.	Խաղալիքներ	37	12	49	75.5	27	17	0	44
7.	Օծանելիքակոսմետիկական արտադրանք	23	29	52	44.2	16	17	0	33
8.	Լվացող և մաքրող միջոցներ	1	8	9	11.1	0	1	0	1
9.	Ցածրավոլտ սարքավորումներ	48	11	59	81.4	33	32	0	65
10.	Գազանման վառելիքով աշխատող սարքավորումներ	3	5	8	37.5	3	2	0	5
11.	Քսանյութեր, յուղերին և հատուկ հեղուկներ	6	3	9	66.7	5	3	0	8
12.	Կենցաղային եվ սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներ	12	15	27	44.4	8	5	0	13
13.	Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանք	10	14	24	41.7	9	9	0	18
14.	Ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիք	10	14	24	41.7	0	0	10	10
15.	Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն	49	8	57	86.0	31	25	0	56
16.	Թեթեվ արդյունաբերության	10	6	16	62.5	5	7	0	12
17.	Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և այդ հիմքով պլաստմասսայե արտադրանքներ	2	9	11	18.2	2	2	0	4
18.	Չափումների միասնականության ապահովում	78	48	126	61.9	0	0	78	78
19.	Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառք	2	2	4	50.0	0	0	2	2
20.	փաթեթվածք	1	4	5	20.0	0	1	0	1
21.	Ծխախոտային արտադրանք	0	5	5	0.0	0	0	0	0
22.	Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման գործունեություն	0	1	1	0.0	0	0	0	0
23.	Բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանք	1	1	2	50.0	1	0	0	1
24.	Սեղմված բնական գազով աշխատող վառելիքային համակարգեր	1	1	2	50.0	0	1	0	1
	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	333	229	562	58.8	159	131	109	399

2020 թվական

N	Ոլորտի անվանումը	Կիրառված ստուգաթերթերի քանակը			Խախտում տեսակա-ռար կշիռը (%)	Խախտումների բնույթը			Խախ-տումների ընդհանուր քանակը
		ըստ խախտում-ների առկայության	Ըստ խախտումների բացակա-յության	Ընդա-մենը (3+4)		համապա-տասխանության գնահատման փաստաթղթերի բացակայություն	թերի մակնշում կամ բացակա-յություն	այլ	
1	2	3	4	5	6	7	8	9	10
19.	Ավտոգազալիցքավորման ճնշակայաններ (ԱԳԼՃԿ)	25	18	43	58.1	0	0	25	25
20.	Ցեմենտ	6	5	11	54.5	6	0	0	6
21.	Սինթետիկ հիմքով լաքեր և ներկեր	6	4	10	60.0	4	5	0	9
22.	Խեցեգործական ամանեղեն	6	20	26	23.1	3	4	0	7
23.	Խաղալիքներ	26	26	52	50.0	18	13	0	31
24.	Օծանելիքակոսմետիկական արտադրանք	32	79	111	28.8	16	23	0	39
25.	Լվացող և մաքրող միջոցներ	5	27	32	15.6	2	3	0	5
26.	Ցածրավոլտ սարքավորումներ	36	34	70	51.4	21	20	0	41
27.	Գազանման վառելիքով աշխատող սարքավորումներ	3	2	5	60.0	2	1	0	3
28.	Քսանյութեր, յուղերին և հատուկ հեղուկներ	2	3	5	40.0	1	2	0	3
29.	Կենցաղային եվ սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներ	12	28	40	30.0	11	3	0	14
30.	Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանք	21	7	28	75.0	11	14	0	25
31.	Ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիք	26	12	38	68.4	0	0	26	26
32.	Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն	34	23	57	59.6	16	20	0	36
33.	Թեթեվ արդյունաբերության	55	5	60	91.7	29	33		62
34.	Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և այդ հիմքով պլաստմասսայե արտադրանքներ	5	22	27	18.5	5	0	0	5
35.	Չափումների միասնականության ապահովում	174	91	265	65.5	0	0	174	174
36.	Փաթեթվածք	0	2	2	0	0	0	0	0
37.	Բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանք	6	1	7	85.7	6	0	0	6
38.	Հեղուկացված ածխաջրածնային գազեր	0	32	32	0	0	0	0	0
	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	480	410	890	53.9	151	141	225	517

Հավելված 2

N	Իրավական ակտի անվանումը	Ընդունող մարմին		
		անվանումը	ամսաթիվը	համարը
1.	Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք	Գերագույն խորհուրդ	06 դեկտեմբերի 1985թ.	--
2.	Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենք	ՀՀ Ազգային ժողով	18 փետրվարի 2004թ.	ՀՕ-41-Ն
3.	Հայաստանի հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենք	ՀՀ Ազգային ժողով	17 մայիսի 2000թ.	ՀՕ-60
4.	Տեսչական մարմինների մասին ՀՀ օրենք	ՀՀ Ազգային ժողով	17 դեկտեմբերի 2014թ.	ՀՕ-254-Ն
5.	Թանկարժեք մետաղների մասին ՀՀ օրենք	ՀՀ Ազգային ժողով	23 մաիսի 2006թ.	ՀՕ-83-Ն
6.	Տեխնիկական կանոնակարգման մասին ՀՀ օրենք	ՀՀ Ազգային ժողով	08 փետրվարի 2012թ.	ՀՕ-19-Ն
7.	Ստանդարտացման մասին ՀՀ օրենք	ՀՀ Ազգային ժողով	08 փետրվարի 2012թ.	ՀՕ-21-Ն
8.	Չափումների միասնականության ապահովման մասին ՀՀ օրենք	ՀՀ Ազգային ժողով	08 փետրվարի 2012թ.	ՀՕ-22-Ն
9.	Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենք	ՀՀ Ազգային ժողով	24 նոյեմբերի 2004թ.	ՀՕ-134-Ն
10.	Սպառողների իրավունքների պաշտպանության մասին ՀՀ օրենք	ՀՀ Ազգային ժողով	26 հունիսի 2001թ.	ՀՕ-197
11.	Հայաստանի Հանրապետությունում մաքսային միության տեխնիկական կանոնակարգերը գործողության մեջ դնելու կարգի մասին	Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիա	14 ապրիլի 2015թ.	N 28 որոշում
12.	Ցածրավոլտ սարքավորումների անվտանգության մասին ՄՄ ՏԿ 004/2011	Մաքսային միության հանձնաժողով	16 օգոստոսի 2016թ.	N 768 որոշում
13.	Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին ՄՄ ՏԿ 009/2011	Մաքսային միության հանձնաժողով	23 սեպտեմբերի 2011թ.	N 799 որոշում
14.	Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանքի անվտանգության մասին ՄՄ ՏԿ 007/2011	Մաքսային միության հանձնաժողով	23 սեպտեմբերի 2011թ.	N 797 որոշում
15.	Ավտոմոբիլային և ավիացիոն բենզինին, դիզելային և նավերի համար նախատեսված վառելիքին, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքին և մազութին ներկայացվող պահանջների մասին ՄՄ ՏԿ 013/2011	Մաքսային միության հանձնաժողով	18 հոկտեմբերի 2011թ.	N 826 որոշում
16.	Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիությունը ՄՄ ՏԿ 020/2011	Մաքսային միության հանձնաժողով	9 դեկտեմբերի 2011թ.	N 879 որոշում
17.	Գազանման վառելիքով աշխատող սարքավորումների անվտանգության մասին ՄՄ ՏԿ 016/2011	Մաքսային միության հանձնաժողով	9 դեկտեմբերի 2011թ.	N 875 որոշում
18.	Խաղալիքների անվտանգության մասին ՄՄ ՏԿ 008/2011	Մաքսային միության հանձնաժողով	23 սեպտեմբերի 2011թ.	2011թ. որոշում
19.	Կահույքագործական արտադրանքի անվտանգության մասին ՄՄ ՏԿ 025/2011	Մաքսային միության հանձնաժողով	15 հունիսի 2012թ.	N 32 որոշում
20.	Թեթև արդյունաբերության արտադրանքի անվտանգության մասին ՄՄ ՏԿ 017/2011	Մաքսային միության հանձնաժողով	9 դեկտեմբերի 2011թ.	N 876 որոշում
21.	Քսայուղերի, յուղերի և հատուկ հեղուկների նկատմամբ պահանջների մասին ՄՄ ՏԿ 030/2011	Մաքսային միության հանձնաժողով	20 հունիսի 2012թ.	N 59 որոշում

22.	Փաթեթվածքի անվտանգության մասին ՄՄ ՏԿ 005/2011	Մաքսային միության հանձնաժողով	16 օգոստոսի 2011թ.	N 769 որոշում
23.	Ծխախոտային արտադրանքի մասին ՄՄ ՏԿ 035/2011	Եվրասիական տնտեսական հանձնաժողով	12 նոյեմբերի 2014թ.	N 107 որոշում
24.	Երասիական տնտեսական միության (մաքսային միության) տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնող լիազոր մարմինները	ՀՀ կառավարություն	30 հունվարի 2015թ.	N 71-Ն
25.	Մակերեվութակտիվ միջոցների և մակերեվութակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգ	ՀՀ կառավարություն	16 դեկտեմբերի 2004թ.	N 1795-Ն որոշում
26.	Սինթետիկ հիմքով լաքերի և ներկերի տեխնիկական կանոնակարգ	ՀՀ կառավարություն	18 նոյեմբերի 2004թ.	N 1647-Ն որոշում
27.	Վերգետնյա տրանսպորտային միջոցներում օգտագործվող անվտանգ ապակիների տեխնիկական կանոնակարգ	ՀՀ կառավարություն	24 փետրվարի 2005թ.	N 289-Ն որոշում
28.	Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և այդ հիմքով պլաստմասսայե արտադրանքների տեխնիկական կանոնակարգ	ՀՀ կառավարություն	25 մայիսի 2005թ.	N 679-Ն որոշում
29.	Ռադիոսարքավորումների եվ հեռահաղորդակցության վերջնակետային սարքավորումների տեխնիկական կանոնակարգ	ՀՀ կառավարություն	15 դեկտեմբերի 2005թ.	N 2228-Ն որոշում
30.	Բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգ	ՀՀ կառավարություն	2 փետրվարի 2006թ.	N 179-Ն որոշում
31.	Ցեմենտներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգ	ՀՀ կառավարություն	10 օգոստոսի 2006թ.	N 1136-Ն որոշում
32.	Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգ	ՀՀ կառավարություն	19 հոկտեմբերի 2006թ.	N 1546-Ն որոշում
33.	Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման տեխնիկական կանոնակարգը և գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման հրահանգ	ՀՀ կառավարություն	28 սեպտեմբերի 2005թ.	N 2388-Ն որոշում
34.	Ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգ	ՀՀ կառավարություն	28 օգոստոսի 2008թ.	N 1101-Ն որոշում
35.	Խեցեգործական ամանեղենի վերաբերյալ տեխնիկական կանոնակարգ	ՀՀ կառավարություն	16 նոյեմբերի 2006թ.	N 1750-Ն որոշում
36.	Շինարարական ապակիներին ներկայացվող անվտանգության պահանջների տեխնիկական կանոնակարգ	ՀՀ կառավարություն	3 դեկտեմբերի 2009թ.	N 1419-Ն որոշում
37.	Ավտոմոբիլային տրանսպորտային միջոցներում սեղմված բնական գազով աշխատող վառելիքային համակարգին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգ	ՀՀ կառավարություն	24 դեկտեմբերի 2015թ.	N 1520-Ն որոշում
38.	1000 վ-ից բարձր լարման փոխարկման էլեկտրական ապարատներին ներկայացվող անվտանգության պահանջների տեխնիկական կանոնակարգ	ՀՀ կառավարություն	23 նոյեմբերի 2006թ.	N 1922-Ն որոշում
39.	Հարգադրոշմների, տարբերանիշերի և անվանանիշերի ձեվերը, չափերը, նկարագրությունը և դրանց պատրաստման, հաշվառման ու տնօրինման կարգը	ՀՀ կառավարություն	07 դեկտեմբերի 2006թ.	N 1935-Ն որոշում
40.	Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման գործունեության պայմանների և տեխնիկական պահանջների կիրառման կարգը	ՀՀ կառավարություն	21 դեկտեմբերի 2006թ.	N 1916-Ն որոշում

	ՈԼՈՐՏՆԵՐ		2020					2019			
			Իրականացված ստուգումներ	Հայտնաբերված խախտումներ	Խախտ. %	Նպատակին հասնելու մակարդակը		Իրականացված ստուգումներ	Հայտնաբերված խախտումներ	Խախտ. %	Նպատակին հասնելու մակարդակը
1.	ԱԳԼՃԿ		43	21	49	**5.73**		46	22	47	**7.93**
2.	Խաղալիքներ		49	26	53	**4.57**		46	33	72	**2.02**
3.	Ավտոմոբիլային և ավիացիոն բենզին, դիզելային և նավերի համար նախատեսված վառելիք		26	14	54	**13**		20	9	45	**20**
4.	Քսուքային նյութեր, յուղեր և հատուկ հեղուկներ		6	2	33	**8.82**		9	6	67	**2.50**
5.	Չափումների միասնականության ապահովում		262	174	66	**2.45**		118	68	58	**2.85**
	Ա- ԱԳԼՃԿ (1)	Ա	44	16	36	**4.45**	Ա	43	9	21	**7.96**
	Բ – Բուժ. ծառայություն	Բ	21	17	81	**1.96**	Բ	30	28	93	**1.76**
	Գ – Ավտոմոբիլային և ավիացիոն բենզին, դիզելային և նավերի համար նախատեսված վառելիք (3)	Գ	32	19	59	**2.58**	Գ	27	20	74	**2.16**
	Դ - Քսուքային նյութեր, յուղեր և հատուկ հեղուկներ (4)	Դ	2	1	50	**3.33**	Դ	3	2	66	**2.50**
	Ե – Օծանելիք և կոսմետիկ արտադրանք (12)	Ե	1	0	0	**-**	Ե	6	2	33	**4.16**
	Զ – Բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանք (13)						Զ	1	1	100	**1,66**
	Թ - Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման գործունեության պայմաններ և պահանջներ (30)						Թ	1	1	100	**1,66**
	Ն – Կշեռք	Ն	128	101	79	**2,09**	Ն	3	3	100	**3.26**
	Շ – Հեղուկ գազի լիցքավորում	Շ	32	20	62	**2,61**	Շ	4	2	50	**3.33**
6.	Կահույքագործական արտադրանք		Ստուգումներ չեն իրականացվել					Ստուգումներ չեն իրականացվել			

7.	Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցներ	19	5	26	**7.72**	8	1	12	**20**
8.	Ցածրավոլտ սարքավորումներ	56	32	57	**3.11**	58	42	72	**1.85**
9.	Գազանման վառելիքով աշխատող սարքավորումներ	5	3	60	**3.52**	8	3	37	**5**
10.	Օդաճնշական դողեր	Ստուգումներ չեն իրականացվել				Ստուգումներ չեն իրականացվել			
11.	Սինթետիկ հումքով լաքեր և ներկեր	10	6	60	**3.26**	10	10	100	**1.73**
12.	Օծանելիքակոսմետիկական արտադրանք	98	28	28	**7.55**	59	25	42	**3.70**
13.	Բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանք	2	2	100	**1.66**	2	1	50	**3.33**
14.	Ռադիոսարքավորումների և հեռահաղորդակցության վերջնակետային սարքավորումներ	2	2	100	**1.56**	4	4	100	**1.53**
15.	Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն	36	22	61	**2.94**	53	38	72	**1.87**
16.	Թեթև արդյունաբերության արտադրանք	60	55	91	**1.94**	16	9	**56**	**3.48**
17.	Ծխախոտային արտադրանք	Ստուգումներ չեն իրականացվել				5	0	**0**	**-**
18.	Վերգետնյա տրանսպորտային միջոցներում օգտագործվող անվտանգ ապակիներ	2	2	100	**1.66**	Ստուգումներ չեն իրականացվել			
19.	Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և այդ հիմքով պլաստմասսայե արտադրանք	15	4	27	**6.38**	11	2	18	**6.11**
20.	Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներ	27	11	41	**4.34**	26	12	46	**4.40**
21.	Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանք	22	18	82	**2.26**	23	12	52	**3.21**
22.	Ավտոմոբիլային տրանսպորտային միջոցներում սեղմված բնական գազով աշխատող վառելիքային համակարգ	Ստուգումներ չեն իրականացվել				2	1	**50**	**12.5**

23.	Հեղուկ Գազ	14	0	0	-	1	0	**0**	-
24.	Շինարարական ապակիներ	Ստուգումներ չեն իրականացվել				Ստուգումներ չեն իրականացվել			
25.	Խեցեգործական ամանեղեն	13	2	15	**8.33**	17	8	47	**2.33**
26.	Ցեմենտ	4	4	100	**2**	1	0	**0**	-
27.	1000 Վ-ից բարձր լարման փոխարկման էլեկտրական ապարատներ	Ստուգումներ չեն իրականացվել				Ստուգումներ չեն իրականացվել			
28.	Փաթեթվածք	Ստուգումներ չեն իրականացվել				5	1	**20**	**12.5**
29.	Թանկարժեք մետաղներից պատրաստված իրեր	Ստուգումներ չեն իրականացվել				4	2	50	**3.33**
30.	Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման գործունեության պայմաններ և պահանջներ	Ստուգումներ չեն իրականացվել				1	0	0	-

Հավելված 4

	ՈԼՈՐՏՆԵՐ	2020			2019		
		Իրականացված ստուգումներ	Հայտանբերված խախտումներ	Նպատակին հասնելու մակարդակը	Իրականացված ստուգումներ	Հայտանբերված խախտումներ	Նպատակին հասնելու մակարդակը
	ԱԳԼՃԿ	43	21	**5.73**	46	22	**7.93**
2.	Խաղալիքներ	49	26	**4.57**	46	33	**2.02**
3.	Ավտոմոբիլային և ավիացիոն բենզին, դիզելային և նավերի համար նախատեսված վառելիք	26	14	**13**	20	9	**20**
4.	Օծանելիքակոսմետիկական արտադրանք	98	28	**7.55**	59	25	**3.70**